

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաւ ճշամներ.— Խմբագրական Նշմարք.—
Նամակ Կ. Պոլսէ.— Թէ ինչպէս Հայ տղարը
Թրքանալէ կը փրկուին.— Ակնայ Զարդին
Պատմութիւնը.— Քաղաքացիք և Բնացման
Օրէնք Միացեալ Տէրութեանց.— Ուսթըրի
մէջ.— Մաշթոց Վարդապետ Փափագեան.— Այլ
և այլք:

ԼԱՒ ՆՇԱՆՆԵՐ

Ինչ ճշամներէ կը հասկցուի թէ ազգ մը տո-
կում, կենսունակ, յառաջդիմական է. ի՞նչ
եմ Հայ ազգին համար փրկութեամ
պայմանները, և արդեօք Հայերը
այդ պայմաններն իրաց-
նելու ընդունակութիւն
ցոյց կուտան:

Հայ ցեղն ուսումնասիրելու ամենալաւ
առիթը կայ Հիմա: Մեր Ազգը վերջին
տարիներս կ'անցնի փորձի հրաւիր բովէն:
Եթէ լաւ նիւթ չէ, գիրտ միայն պիտի
մնայ. եթէ ոսկեղէն յատկութիւն ունի,
աւելի մաքրուած դուրս պիտի գայ:

1870ի ահագին ջախջախումէն յետոյ
Ֆրանսա ապացոյց տուաւ՝ ի մեծ զարմա-
նքս աշխարհի՝ թէ ինք կեանքի ներքին,

խորին ազբիւրներ ունի, որուն չեն կրցած
հասնիլ Բրուսական մահաբոյր ռումբերը:
Կոպիտն Պիսմարք ամենէն աւելի ապշող-
ներէն եղաւ, զի բարոյական զօրութեան
ոյժը չէր ըմբռնած ըստ արժանւոյն:

Աշխարհ մեզի նկատմամբ ալ վճիռ
մը պիտի տայ ի մօտոյ. պիտի սքանչանայ
մեր վրայ կամ պիտի արհամարհէ զմեզ:

Մենք Հայրենիքի մէջ և Հայրենիքէն
դուրս կը տեսնենք ինչ ինչ լաւ նշաններ:

Կը տեսնենք թէ ազգը բարոյական
խտուրթիւն մը ստանալու վրայ է, հետե-
ւապէս զօրութիւն չափելու ուղղութեան
մէջ է: Լուսաւորչական, կաթողիկ և բո-
ղոքական ազգայիններն իրարու աւելի
մօտեցած են: Toleranceի կամ թոյլտու-
ութեան ոգին, զօրացած է, այսինքն այն
ոգին որ կրօնական և քաղաքական խնդ-
րոց մէջ ուրիշներուն տարբեր համոզումը
անոնց յանցանք չի համարիր, այլ մանա-
ւանդ իրաւունքը կը համարի և մեծահո-
գիութեամբ կը յարգէ այդ իրաւունքը:
Կրմանանք թէ Թուրքիոյ մի քանի քաղաք-
ներուն մէջ բողոքական երէցներ թոյլ
տուած են լուսաւորչական երիցու երթալ
իրենց բողոքական ժողովրդին քարոզ խօ-
սիլ և ինչ ինչ աղօթքներ արտասանել
ըստ լուսաւորչական պաշտամանց, բերե-
լով երբեմն իրենց սեղանը, բուրվառը և
այլ ինչ որ հարկաւոր է, և զետեղելով

զայնս բողոքական բեմին առջեւը: Նոյն պէս և փոխադարձաբար, բողոքական երէցներու թոյլ տրուած է քարոզել լուսաւորչական եկեղեցիներու մէջ: Անցեալ օր Խոլանտացի խմբագիր մը, որ հայկական գործերու և Հայոց վրայ շատ բան գիտէ, մեզի կ'առէր թէ հայ կաթողիկոսները Խոլանտացիներուն պէս խաւարամիտ չեն, այլ իրենց ազգութիւնը կը ճանաչեն և ազգասէր են ընդհանրապէս: Ուսթըրի նորեկ վարդապետը Հայր Մաշթոց նոյնպէս գիտել կուտար իւր նախորդին, Հայր Տէրունեանի, թէ կրօնական թոյլտուութեան ոգին աւելի զօրաւոր է բուն Հայաստանի մէջ քան Ամերիկայի Հայոց մէջ: Ո՛րչափ փոխուած են միսիոնարը ու բողոքական քարոզիչը և ո՛րչափ փոխուած է լուսաւորչական քահանայն: Ասկէ կը նշմարուի թէ ի հայրենիս, փորձութեան կրակի բոցին մէջ, մեր ազգայինք իրարու հետ կը ձուլուին, կը միանան ջերմ սիրով, փոխանակ զիրար անիծելու և վատաբար իրարմէ քարշելու, կամ փոխանակ իրարու գլուխ պատռելու ինչպէս արտասահմանի մէջ. վիճաբանութեան արձակ առպարիզին վրայ, ոմանք կ'անեն կամ կ'անէին մինչև վերջերս:

Բայց արտասահմանի մէջ ալ լաւ նշաններ կան: Ամերիկայի Հայերը կրթասիրութեան ապացոյց կուտան: Շատ մը փոքր ընկերութիւններ կազմուած են Հայրենիքի այս կամ այն դպրոցին ծաղկմանը նպաստելու համար: Հաստատուած են նաև ոչ սակաւ գրադարաններ, ինչպէս Հուայթնովիլի, Ուօքիլընի, Ուստըրի և Փրովիտէնսի մէջ: Իւրաքանչիւրը ունի քանի մը հարիւր հայերէն հատոր: Անցեալ օր Ուստըրի մէջ խօսակցելով գիտնոյ մը հետ, յիշեցի թէ Ուստըրի Հայերը կը տօնէին իրենց գրադարանի հինգերորդ տարեդարձը. բարեկամս յանկարծական ցնծութեամբ մը պատասխանեց թէ չէր կարծեր թէ Հայերը այդքան ընթերցասէր էին և գովեց մեր ազգը:

Լաւ նշան մ'ալ ամուսնութեանց յաճախութիւնն է: Կարինէն անցեալներ կը գրէին Մշակին թէ «Կարնոյ ժողովուրդը, այս տօներին, իւր խրախճանութեանը կը հետևի, չնայելով քաղաքական ալէկոծութեանց: Միայն Ս. Սարգսի չաբաթ գիշեր 30—32 պսակ կատարուեր է Կարնում: ... Թրքեր կը պակսեցնեն իրենք ալ կ'աւել-

ցնեն»:

Այս նշաններն կը ցուցնեն ակներև թէ Հայ ազգը իւր այս առերևոյթ ջախջախումին մէջ յուսահատած չէ. և չյուսահատիլը ամենալաւ նշանն է կենսունակութեան: Հայերը իրենց կրթասիրական ջանքերովը պարզ կը ցուցնեն թէ ամենեւին մեռնելու միտք չունին, այլ որչաժ են ապրիլ, մրցիլ, յառաջ երթալ առ ոտն կոխելով ամեն արգելք:

Հայ ժողովուրդը նման է անհատի մը որ հինգերորդ յարկէն վար կ'իյնայ և կը կարծուի թէ մեռած է կամ կը մեռնի. բայց ահա ոտքի կ'ելնէ ի մեծ ապշութիւն աշխարհի՝ և կը սկսի իւր գործը շարունակել:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐԲ

Ուստըրի հայ գաղթականութեան մէջ գիտելի է թէ աւելի յաջող եղած են ամուսնացեալ Հայերը քան թէ ամուսնիները: Ընտանեօք Հայերը տուն ունին կամ ունենալու ուղղութեան մէջ են, իսկ անկրկները կը մնան նաև անտուն: Կրնայ կարծուիլ թէ արդէն ճարտար անհատներն են ամուսնացողներն, և անոնց յետ ամուսնութեան յաջողութիւնն ալ արդիւնք է իրենց գործունէութեան: Այդ թերեւս չափով մը ճշմարիտ է. բայց անուրանալի է նաև այն թէ շատ մը ամուսնիներ կանամբի անհատներու շափ կամ աւելի իսկ դրամ չափած են, բայց կամ չափալուծեամբ կամ անխոհեմ գործածութեամբ կորուսած են, մինչ եթէ ամուսնացած լինէին, չօչափելի և ապահով ձեւերու տակ պիտի պահպանուէին իրենց խնայողութիւններն:

Այժմ Ուստըրի—ինչպէս և այլ տեղերու—հայ երիտասարդներուն մէջ ամուսնանալու բաղձանքը զօրացած է, և պսակ շատ կը լինի: Պատճառը սա է թէ Թուրքիոյ վիճակն անստոյգ լինելով՝ շատ մօտ ապագայի մէջ հայրենիք վերադառնալու յոյս չունին, և ուստի լաւ կը համարին ամուսնանալ և սպասել տարի մը կամ աւելի, մինչև որ վերադառնալու ճամբան բացուի: Ամուսնացողները ջերմագին շնորհաւորութեան արժանի են, մանաւանդ որ հայուհիներու հետ կը պսակուին

առ հասարակ, որով դիւրին կը լինի իրենց հայրենիք դառնալ երբ որ ուզեն:

Քանատայի Թօրօնթօ քաղաքէն Տիկին Լի, անցեալ օր այցելելով մեր խմբագրատունը, վճարեց 12 սուրբ, պատուիրելով որ 12 Ամերիկացի և այլ նշանաւոր անձանց յղենք անգլիերէն ՀԱՅԻՔը մէկ տառի:

Թրօյի Հայ երիտասարդներն ալ 10 տուար հանգանակելով նոյնքան նշանաւոր Ամերիկացիներու համար անգ. Հայքի բաժանորդ գրուեցան:

Բարիդի Հայրենակիցներէն Տիար Յ. Իսկէնտէր 100 Ֆրանք այս տարի, ինչպէս նախորդ տարիները, նուիրած է Հայքի. Բարիկան մեր միւս աջակիցները այս տարի տակաւին նորագոյն չեն իրենց օգնութիւնը:

Ծովայի Սուրապայայէն ստացած ենք մեր Հայրենակից Տիար Յ. Քիւրքճեանի նպատար 35 Ֆրանք: Այս ազնիւ անհատը մեր ամենաուստ նպատաստներէն մին եղած է:

Այս տարի ուրիշ տարիներէ նուազ նպատակ եղած է Հայքի, մինչդեռ ծախքերն շատ աւելցած են: Ծախքի այս աճումը մեր հաճոյքին համար չէ, այլ դործը ըստ արժանւոյն կատարել կարենալու համար: Ամերիկացիք շատ կ'ախորժին Անգլ. Հայքէն, և եթէ տպագրութեան ծախքերը ըստ մասին հոգացուէին մերայնոց կողմէն, կարելի կը լինէր պէտք եղածին պէս տարածել Հայքը այս ընդարձակ երկրին մէջ: Սակայն կ'երեւի թէ մերայինք քիչ կը հասկնան Հայքի օգտակարութիւնը և անոր հրատարակութեան զանազան դժուարութիւնները, — թէ որչափ ժամանակ և որչափ գումար կը պահանջուի:

Գահիրէի և Պուլկարիոյ մեր բաժանորդները շատ դանդաղ կը շարժին այս տարի:

Երիտասարդներէն ոմանք շատ քաջալերեցին մեզ լոկ խօսքով, բայց մինչև հիմա գործնական օգնութիւն մը չընձեռեցին:

ՀԱՅԻԻ նիւթական բեռը այնքան ծանր է, և մեր բանիմաց դասը կրնայ վերցնել զայն դիւրաւ, եթէ կամք ունենայ:

Շատեր կը կարդան այս սուղերը, և սակայն չեն հարցներ իրենց իրենց. «Ինչ կրնամ, ինչ պարտաւոր եմ անել ես սա թերթին օգնելու համար:»

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայերէն Հայքի տարեկան բաժանորդագիրն է երկու տուար (տասը Ֆրանք): Անգլիերէն Հայքի տարեկանն է մէկ տուար (հինգ Ֆրանք): Հայերէնին համար երկու տուար վճարողը կրնայ Անգլիերէնն ալ ձրի ստանալ եթէ փափաք յայտնէ:

ՆԵՄԵՆԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ. Պոլիս, Մայիս 24, 1897

Հայու վիճակն ախուր է ամեն ուրեք: Մայր աթոռէն ինձ կը գրեն թէ փակեալ վարժարանաց բացումն անհնար է: Կաթողիկոսական կուսակցութիւնք կը շարունակուին, յուզում կը տիրէ Էջմիածնայ միարանութեան մէջ իսկ և Հայրիկ իւր թշնամեաց հետ համակերպիլ ստիպուած է: Երուսաղէմի վանուց պարտքը կը ստուարանայ, Իզմիրլեան հիւանդ է, տաք կ'լիման չի յարմարիր նմա: Թուրքիոյ գաւառացի Հայը աւելի քան երբէք կը տառապի, հարստահարութիւնք ծայրագոյն աստիճանին հասած են, խըստիւ տուրք կը պահանջուի մերկ ու անօթի ժողովրդէն, քնացած կարասի և հանգերձեղէն ի վաճառ կը հանուին Կարիւհաւաքաց կողմանէ: Ամեն կողմէ հապարաւորներու նօթութեան աղափակ կը հասնի ի պատրիարքարան. սկսած են սովամահ կորնչիլ: Պատրիարքարանն անկարող է բան մ'ընելու, մինչև անգամ անօթիներու ի նպատակ ձեռնարկ մ'ընելու: Իւր թագրիրներն անպատասխանի էր մընան. խնդիրքներն չեն ընդունուիր: Պատրիարքարանի յարաբերութիւններն դեպատաստանց հետ գրեթէ վերջ գտած են:

Հաւանականաբար ի մօտոյ քոնձէռանս մը տեղի պիտի ունենայ. Պատրիարքարանն իւր ներկայ ընթացքով անկարող է դիմումներ ընել և կամ ժողովականաց հետ բանակցելու պաշտօնով պատուիրակութիւն մը ղրկել. ինչ պիտի որոշուի մեր մասին: Աւելի քան երբէք պէտք կը զգացուի ազգային գործող մարմիններու և գործօն անհատներու միութեան, այդ անջատ ուժերու ի մի ձուլումէն շատ բան կրնամք յուսալ. գիտեմ թէ քանի՜ աշխատեցաք առ այդ դուք և ընդ ձեզ այլք, ցաւալի է որ չյաջողեցաք. սակայն կրկին փորձելու է զայն:...

ՀՈՎ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՀԱՅ ՏՂԱՔԸ
ԹՐԲԱՆԱԼԷ ԿԸ ՓՐԿՈՒԻՆ

Ուարբերդի միսիօնարուհիներէն մին, Տիկին Պարնըմ, հետեւեալը գրած է իւր ամերիկացի բարեկամներուն. —

«Մեծ ցնծութիւն է (Հայ) մանուկներուն զուարթ երեսները տեսնել այլև այլ

ապաստանարաններուն մէջ: Փոքրիկ աղ-
ջիկ մը՝ շատ մը ջանքերէ ետեւ՝ ազատե-
ցինք տաճկի մը տնէն ուր պահուած էր
նա ջարդէն ի վեր, և մոռցած էր հայերէն
լեզուն, թէպէտ իրեն ըսուածները կը հաս-
կնար:

«Մեր «Տուն»երէն մէկուն մէջ հինգ
վեց տարեկան տղեկ մը կայ, զոր անցեալ
օր շատ դժուարութեամբ փրկեցինք տա-
ճիկներուն ձեռքէն: Սա ալ մոռցած էր
զիւր մայրենի լեզուն, ինչպէս և զիւր
բարեկամներն: Շատ լացաւ երբ մեր տու-
նը բերինք զինքը: Իւր երէց եղբայրը,
Մկրտիչ, նոյնպէս թրքաց ձեռքէն պըրծ-
ուած, արդէն ի «Տան» էր, ոսկորին մէկը
կոտրած լինելով՝ պառկած էր: Բայց փոք-
րիկն Գրիգոր չէր ուզեր անոր հետ խօսիլ
այլ տախտակամածին վրայ ընդ իսլ սըփ-
ուեցաւ և ճչեց:

«Մենք հիմա չորս մեծկակ տներ վար-
ձած ենք քաղաքի մէջ և իւրաքանչիւրը
քրիստոնեայ ընտանիքի մը հսկայութեան
ներքեւ է: Խարբերդի և Տօտակայ քա-
ղաքներուն մէջ այժմ 700 որբեր կը խնա-
մենք:»

ԵՄԵՆՅ ԶԱՐԴԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Շաբ. տես թիւ 10:)

Սարահըզցի Ղազի Մէհէմէտը

Դէպքէն 4—5 օր յառաջ Սարահըզցի
Ղազի Մէհէմէտ կոչուած մարդուն քա-
ղաք գալը կասկածներ արթնցուց Հայոցս
մէջ: Այս Մէհէմէտն Արաբկերի չրջա-
կայից մէկ գիւղէն է որ սակայն Ակնայ
կառավարական շրջանին կը վերաբերի:
Արաբկերի անցեալ տարւոյ ջարդերուն
խոշոր մասնակցութեամբ մը Ղազի տիտ-
ղոսին արժանացած 35—40 տարեկան
մարդ մ'է, իւր դէմքին վրայ անգթու-
թեան և չարութեան յայտնի դրոշմ ու-
նի: աչքերուն մէջ վայրագ բան մի կայ:
Ջարդերէն վերջ իւր անունը անէծքով և
գարշաւքով կը յիշուէր միշտ: միշտ ալ
որ քաղաք եկած է կասկածներ արթնցած
են մեր մէջ: գիտէինք թէ առանց իւր և
իւրայնոց օգնութեան բան մը չպիտի լի-
նէր:

Պոլսոյ վերջին դէպքէն յետոյ շատ ո-
րոշ էր թէ թուրքերը որչա՛փ կատաղած
են: Կացութիւնը շատ փափուկ էր: ա-
մէն ոք կը հարցնէր թէ Սարահըզցին ին-
չո՞ւ եկած է: վերջապէս ըսուեցաւ թէ
աւետարական գործ մը ունի: Հայերն
խաբուելու հակամէտ են. և ո՞չ ապաքէն
մենք ալ մեր քաղաքականութիւնը ու-
նինք: Մինչդեռ Ջարն կ'այցելէ անգլիա-
կան արքունեաց, ջարդ կ'արելի՞ է միթէ:
Թուրքերն այնքան տգէ՛տ են որ իրենց
թշնամեաց խորհրդակցած մէկ պահուն
եւ լին կրակին վրայ իւղ լեցնեն:

Պատրամբը

Բայց մենք այնքան տգէտ ենք եւրո-
պական քաղաքագիտութեան որքան թըր-
քականին: վասն զի ճիշդ այդ միջոցին
պատահեցաւ ռմենէն սոսկալի ջարդերէն
մէկը առանց ուէ ուղադրութիւն գրաւե-
լու: Ջարդ մը աւելի կամ պակաս, ինչ
փոյթ:

Սեպտեմբեր 1ին կիւրակէ օրն արդէն
քաղաքը սուգի և տրամուլեան մէջ էր:
Պոլսոյ ջարդէն յետոյ շատ մը ընտանիք-
ներ բնաւ լուր առած չէին իրենց ի Պոլիս
գտնուող անդամոց նկատմամբ: նոյն օրն
կամ նախորդն փոստան եկած էր և շա-
տերու կասկածն իրականութեան փոխ-
ուած էր: քաղաքը կ'ողբար: Բայց այս
տհազին սուղը նախաճաշակ մի միայն էր
գալու անհուն սուգին և աներեւակայելի
աւերմունքին:

Կը յիշեմ թէ ես ալ նոյն օրն քանի
մը տեղ այցելեցի: վերջին անգամ Մա-
տիկոնցն էի: փեսանին սպաննուած էր ի
Պոլիս: շատ խօսեցանք կացութեան վե-
րաբերութեամբ: ոմանք լաւատես այլք
յոռետես էին: Ներսիսեան դպրոցը որ
զօրաց ժամանումէն յետոյ զօրանցի փո-
խուած էր երեք չորս օրէ ի վեր պարպ-
ուած էր, և որչա՛փ ալ զօրաւոր խնդիր
եղաւ թաղին Հայոց կողմէն որ չարունա-
կեն մնալ, օգուտ չըրաւ: կը մեկնէին թէ
դպրոցի տղայք այլ ևս թափառական չը
մնալու համար կը հանեն, և ճիշդ այդ
դէպքին մէջ ինպատու մեր բան մը կը
տեսնէինք, մեզմ քաղաքականութիւն, որ-
պէս սովոր էինք կոչել:

Չեմ գիտեր ինչպէս կիրակի երեկոյ
վտանգի զգացումներն զօրացած էին: Գա-
ստախտ և ժամկոչեան և այլք կը պըն-

դէին թէ ասկէ յառաջ եղածներուն նման այս ալ յուէտ արկայից բարբառնջանքն է, յաջորդ օրն կամ երկու օրէն միտալան պիտի գար, և կարելի՞ էր որ այդպիսի բարձրաստիճան զինուորական մը իւր բնակութեան որոշուած քաղաքն անմիջապէս հուրի և սուրի մատնուելու թոյլ տար:

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱՅԻՔ

ԵՒ ԲՆԱԳՄԱՆ ՕՒՆԵՐ

ՄԻԱՑԵԱԼ ՏԵՐՈՒԹԵԱՆԾ

Բնացում բառն անգլիերէն նէշըրէ-լայզէշըն (naturalization) բառին հայերէնն է: Այն կը նշանակէ բնացուելու, բնիկ ըլլալու, տեղացի դառնալու կրաւորական ընթացքն (process) կամ վիճակն: Ակնե-րեւ է թէ անոնք կը կարօտին կամ կրնան այդ ընթացքի կամ վիճակի ենթարկուիլ որոնք արդէն բնիկ, քաղաքացի չեն: Եթէ նախ յիշենք թէ որոնք քաղաքացիներ են արդէն, յայնժամ կը գտնենք թէ ո՞րոնք կրնան բնացուիլ, և ապա, նկարագրելով բնացուելու օրէնքներն, կը գիտնան թէ ինչպէս կրնան բնացուիլ:

Հետեւեալ անձերն ըլլան, արու կամ էգ, մեծ կամ պզտիկ, սեւ կամ ճերմակ, և ինչ ալ որ լինի իրենց ցեղային ծագումըն, քաղաքացիներ են Միացեալ Տէրութեանց, նաև այն Տէրութեան զորուն նահանգում կը բնակին:—

1. Անոնք որ Միացեալ Տէրութիւններում ծնած են և ենթակայ են անոր իրաւասութեան: Այս դասակարգն կը բովանդակէ Ամերիկացւոց գլխաւոր մասն: Պէտք է գիտել որ անոնք որ ֆոս կը ծնին սակայն ենթակայ չեն Միացեալ Տէրութեանց իրաւասութեան՝ քաղաքացիներ չեն: Ուստի ոչ-քաղաքացւոյն զաւակն որ հոս կը ծնի քաղաքացի չէ մինչև որ այդ իրաւասութեան ենթարկուի կամ իւր հօր բնացմամբ իրամ իւր յայտարարութեամբ:

2. Անոնք որ օրինաւորապէս բնացուած են: Այս կը պարունակէ երկրորդ մեծագոյն դասն Ամերիկացւոց: Դիտելի է թէ անոնք որ կը բնացուին այս երկրի օրինաց համեմատ, իսկոյն կ'ենթարկուին այս երկրի իրաւասութեան, առանց նկատելու անոնց առջի քաղաքացութեան կամ հպատակութեան պարտքերն: Այս արդիւնքն է Տարագրութեան Իրաւանց (the Right of Expatriation) որու ջերմ պաշտպան եղած է միշտ այս երկիր:

3. Անոնք որ այս երկրէն դուրս կը ծնին և ենթակայ են այս երկրի իրաւասութեան: Այս կը պարունակէ քաղաքացւոց զաւակներ որ օտար երկիրներում կը ծնին: Սակայն քաղաքացութեան իրաւունք չիջնէր այն զաւակներու որոց քաղաքացի հայրերը երբեք այս երկրի բնակիչ եղած չեն կամ հոս ծնած չեն:

4. Կիներ և պզտիկ զաւակներ (21 տարեկանէ վար) որոց այրերն կամ հայրերն բնացուած են: Հօր կամ ամուսնոյն բնացումն զանոնք ևս կը բնացունէ օրինական դօրութեամբ:

Այս դասակարգերն գրեթէ կը բովանդակեն բոլոր քաղաքացիներն: Անոնք որ այս դասակարգերուն չեն վերաբերիր, կրնան քաղաքացութեան ընդունուիլ միայն բնացմամբ: Բնացման օրէնքն համառօտիւ սա է.—

Անոնք որ 18 տարեկան և աւելի են պարտին—

1. Երթալ առաջի մի Միացեալ Տէրութեանց կամ մի Տէրութեան արձանագրաւոր դատարանի (Court of Record), երդնուլ թէ իւր դիտաւորութիւնն է Միացեալ Տէրութեանց քաղաքացի լինիլ, և ուրանալ հպատակութիւն բոլոր օտար տէրութիւններու: Յայնժամ կը վճարէ փոքր տուրք մի և կը ստանայ իւր առաջին թուղթն որ իւր այդ գործոյն միակ ապացոյցն է:

2. Այս երկրում շարունակաբար բնակիլ առ նուազն հինգ տարիներ և առաջին թուղթն ստանալէ յետոյ այս երկրում մնալ երկու տարի, և վերջին մի տարւում շարունակաբար բնակիլ մի Տէրութեան նահանգում:

3. Ապա երթալ նման դատարանի առջև և ապացուցանել—

ա. ներկայացնելով իւր առաջին թուղթն՝ թէ առ նուազն երկու տարի առաջ իւր դիտաւորութիւնն յայտնած է քաղաքացի լինելու:

բ. Քաղաքացիներու վկայութեամբ՝ թէ շարունակաբար բնակած է Միացեալ Տէրութեանց երկրում առ նուազն հինգ տարիներ և այն Տէրութեան Նահանգում ուր ինքն կը գիմէ՝ առ նուազն մէկ տարի:

գ. Քաղաքացիներու վկայութեամբ՝ թէ ինքն բարեբարոյ անձ մ'է և այս երկրի օրիւնց հնազանդող:

Ապա, երդնուլ թէ ինքն հաւատարիմ պիտի մնայ Միացեալ Տէրութեանց Սահմանադրութեան (ուստի հարկ է որ գիտնայ թէ ինչ է այդ Սահմանադրութիւն, այսինքն հարկ է որ կարող լինի զայն անգլիերէն կարգալ և հասկնալ), թէ կ'ուրանայ ամեն օտար հպատակութիւն և թէ կը հրաժարի ամեն ազնուական տիտղոսներէ (եթէ երբէք ունի):

Երբ դատարանն փոքր ինչ քննութեամբ համոզուի թէ այս իրերն ճշմարիտ են, յայնժամ կ'ընդունի զօտարական ըն քաղաքացութեան: Նոր քաղաքացին յայնժամ կը վճարէ փոքր մի տուրք և կը ստանայ օրինակ դատարանի արձանագրութեան:

Անոնք որ 18 տարեկան չէին երբ հոս հասան պէտք չունին առաջին թուղթ առնելու: Երբ 21 տարեկան լինին կը դիմեն դատարանի, քաղաքացւոց վկայութեամբ կ'ապացուցանեն թէ պզտիկ էին երբ հոս հասան, հինգ տարիներ և աւելի այս երկրում ապրած են, երկու տարի կամ աւելի առաջ իրենց դիտաւորութիւն եղած է քաղաքացի լինիլ, մէկ տարի կամ աւելի բնակած են այն նահանգում ուր կը գիմեն. թէ բարեբարոյ եղած են և հաւատարիմ պիտի մնան Միացեալ Տէրութեանց սահմանադրութեան, զոր ընթերցած են և կը հասկնան, և յայնժամ կ'ընդունուին քաղաքացութեան:

Անտեղի կը համարիմ հոս նկարագրել բնացման օրինաց նաև այն մասերն որոց Հայերն քիչ անգամ կրնան պէտք ունենալ: Այս յօդուածոյ նպատակն եղած չէ դաս տալ օրինաց վրայ, այլ հարկաւոր չափով պատասխանել հարցումներ գորս այս երկրի Հայերն շարունակ կը հարցնեն:

Ս. Գ. ԲէյՊԱՊԵԱՆ

ՈՒՍԹԸՐԻ ՄԷՋ

Հայկական Գրադարանի Հիմնադրող
Տարեգրծը

Յունիս վեցի կիրակի օրն մեծ հանդէս կար Ուստըրի Հայոց Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովարանին մէջ: Առիթն էր գրադարանի հաստատութեան հինգերորդ տարեգարծը: Գրադարանն ունի իբր 400 հատոր գիրք: Գրադարան մ'ալ Փրովիտէնսի Հայերն հաստատած են, նոյնքան ճոխ, և հանդիսին յղած էին իրենց ներկայացուցիչը: Եկած էին Նիւ Եորքէն ևս երկու հիւրեր: Ծառեր խօսուեցան, երգեր երգուեցան և գոցեր արասանուեցան: Ով որ Ուսթըրի մէջ ուրիշ այդպիսի ժողովներ տեսած էր անցեալ Տարիներ, կրնար գիտել այս հանդիսին տարբերութիւնը որ կը կայանար տիկիներու և աղջկանց բազմութեանը մէջ, որով նոր և շնորհազարդ կերպարան մը կ'առնուր հանդէսը: Վերջին տարւոյս մէջ շատ աճեր է Ուսթըրի մէջ հայ ընտանեաց թիւը, այժմ ոչ նուազ քան յիսուն ընտանիք կան հոն: Եւ որ աւելին է, տիկիներն մասնակից են ազգային կրթական շարժումին և գրադարանին օժանդակ ճիւղ մը կազմաւորած են իրենց մէջ:

Հայոց գրադարանական հաստատութիւններն շատ նպաստաւոր տպաւորութիւն կը գործեն Ամերիկացւոց վրայ: Կը յուսանք թէ այսպիսի շարժումներու շնորհիւ մեր Հայրենակիցներուն անունը ևս քան զէս աւելի յարգելի պիտի լինի Ուսթըրի և այլ քաղաքաց մէջ ի նիւ ինկլէնտ: Առ այս պիտի նպաստէ նաև նոր երկու վարդապետներուն գործունէութիւնը:

ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԱՓԱՋԵԱՆ

Նորընտիր Առաջնորդ Ուսթըրի Հայոց

Ուսթըրի Հայոց նորեկ առաջնորդը արդէն շատ համակրելի եղած է ամենուն, վասն զի լուսամիտ, ուսեալ և երիտասարդ է: Ահաւասիկ իւր համառօտ կենսագրութիւնը:

Ծնած է ի Գողթն Ագուլիս (ռուսահայաստան) 1871 Դեկտ. 27ին, և ուրեմն է իբրև 26 տարեկան: Իւր Հայրն է Տ. Մես-

րովպ քահանայ փառապան, որ յետոյ վարդապետ եղաւ և 1891 սպաննուեցաւ Սալմաստի մօտերն կաթողիկ Ասորիներէն:

Մաշթոց վարդապետ իւր նախնական կրթութիւնն ստացած է Դավրէժի Արամեան վարժարանում, ապա ի Թէհրան և ի Վան, նաև ի Կ. Պոլիս, Ս. Փրկչեան Որրանոցում: 1889ին մտած է Արմաշու նորաբաց Դպրեվանքը, ընդ տեսչութեամբ Օրմանեան Սրբազանի (այժմ պատրիարք) և ուսումնական ընթացք մ'է արելը կրօնական և Ազգային դպրութեանց: 1892ին սարկաւազ ձեռնադրուած է Օրմանեան Սրբապանէն, և 1895ին՝ քահանայութեան և արեղայութեան օծումն ու ձեռնադրութիւնը ստացել է: Իւր ընթացաւարտութեան ճառին նիւթն եղած է «Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ», զոր յանձնած լինելով ի քննութիւն, ընդունել է վարդապետական աստիճան և վկայադրել:

Կ. Պոլսոյ վերջին տխուր դէպքերու ազդեցութեամբ՝ դպրեվանքն ալ կը կրէ նիւթական անձկութիւն, և Օրմանեան Սրբազան կը պարտաւորի ցրուել իւր նախընծայ վարդապետները: Տէր Մաշթոց վարդապետ Հնար կը գտնէ անցնիլ ի Պաւլկարիա, և վերջերս, Վեհ. Հայրապետի հրամանաւ կուգայ Հոփուել Ռուսթրի Հայերն:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Լոնտոն, Յունիս 10—Թուրք բարկացած են Սըր Ֆիլիփ Բըրիի յանկարծական յայտարարութեանը վրայ թէ Անգլիա երբէք թոյլ պիտի չտայ որ Քրիստոնեայք վերստին ենթարկուին թրքական լուծի: Կ'ասեն նաև թէ Գերմանական Դեսպանն չառ շփոթելու է գտնելով զՌուսոյ դեսպանն յայտնաբերող Սըր Ֆիլիփի:

Անգլիոյ դեսպանին տնակնկալ յայտարարութեանը լուրթեամբ մտիկ անելէ ետեւ՝ թէվֆիք փաշան, ըստ Սընի թըղթակցին, սաստիկ յուզուած է և քաշուելու գացել է ֆիշիկ: Պրն. Նէլլաօֆ ալ, նոյնպէս ապշած մեկներ է: Այս պատահելէ Մայիս 22ին: Այնպէս կը հաւատան դիւանագիտական բարձր շրջանաց մէջ թէ Թուրքիա ինք իր մտին դրեր է պահել զԹեոսաղիոս, ըսող Մեծն Բըրտանիա քաջ-

որոշապէս ծանուցել է թէ ինքն Տէրութեանց համաձայնութենէն պիտի հրաժարի եթէ զՍուլթանը չըռնադատեն ետ տալ Յունաց զգաւառն:

Լոնտոն, Յունիս 13.—Կ. Պոլսէն առ թայմզ ուղղեալ Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանը Ձարէն ու Գերմանիոյ կայսրէն խնդրել է իրեն օգնել զԹեոսաղիա վերստանալու: Միւս Տէրութեանց ներկայացուցիչներն սրդողեր են առոր վերայ, և խաղաղութեան դաշնագրին միւս կէտերուն վրայ բանակցիլ չեն ուզեր մինչև որ Թեոսաղիայէն թրքաց ձեռնթափ լինելու խնդրոյն կայանք մը տրուի:

Առջինիկէն, Յունիս 15.—Սուլթանը իրատէսով մը ծանուցել է թէ կ'ընդունի զՏր. Էնճէլ իբրեւ դեսպան Միացեալ Նահանգաց, Հետեւապէս Թէրէլ ճամբայ ելած է Ամերիկա վերադառնալու:

Նիւ Եորքի ազգայիններէն նշանաւոր մեքենիստ Տիար Միսաք Մ. Փիլիպոսեանի ընդ Օր. Մարիամ Երամեանի պսակի հանդէսն կատարուեցաւ Յունիս 12ի Շաբաթ երօկոյին, ինքերկայութեան բաւական թըուով ազգայիններու:

Նոյնպէս Նիւ Եորքի ծանօթ ազգայիններէն Տիար Փառնակ Մ. Այվատեան Յունիս 15ին ամուսնացաւ Օրիորդ Grace Merritt հետ, ի Մօնթլէն, Ն. Ճ.

ՆՈՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Ե Ի

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ

Ատեմախօսութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի

Առ Ամերիկեան Եկեղեցիս,

Հանդերձ Անգլիերէն Բնագրովն

32 երես:

Այս ատենախօսութիւնը կը ցուցնէ Տէրութեանց պատառիտանաւորութիւնը Հայոց կոտորածներուն համար և կ'արտայայտէ Հայ ազգին սուրբ բարկութիւնը եւրոպիոյ դէմ:

Գինն է 10 սէնթ կամ 50 սանթիմ:

Գրել ՀԱՅՔԻ խմբագրին:

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

Մեծադուր Անգլիկերէն Լեզուի
Աշխատասիրեաց և Հաւաքեց
Տիգրան Մ. Պետիկեան
Նիւ Եորք, 1897:

336 երես, կը պարունակէ Համառօտ
քերականութիւն մը, նամականի մը, խօ-
սակցութիւն ընտանեկան, առեւտրական
և այլն, և Հայերէնէ Անգլիկերէն ու Անգ-
լիկերէնէ Հայերէն երկու բառարաններ:
Եօթը հազար բառ կայ:

Դիմն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք:

Դիմել առ ՀԱՅՔԻ Խմբագիրն
341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք
կրնար յղել:

Այսօր, Յունիս 17, Պրն. Պետիկեանի
ՄԵՆՏՈՐ գործէն օրինակներ յղեցինք
փոսթով այն ամեն անձանց որք իմբադ-
րութեանս յղած էին գրքին գինը:

ԵՐԵՐԵՏԵԱՆ ՈՒՇԵՐԵՆ

ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

14 Market St.,

Worcester, Mass.

Այս է ճաշարան և Հօթէլ միանգա-
մայն, ուր ուղեւորներ կրնան օթեվանել,
գիշեր մը կամ օրերով, և հայկական ըն-
տիր կերակուրներ ուտել, յոյժ գիւրա-
մատչելի գներով:

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԻՒՖԷՆՔՃԵԱՆ
Ճաշարանապետ և հիւրամոցի տեսուչ:

LETTERS FROM ARMENIA.

ՆԱՄԱԿԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆԷ

BY J. RENDEL HARRIS and HELEN B. HARRIS.

Այս Անգլիական գիրքը, 225 երես,
կը բաղկանայ չարք մը նամակներէ՝ զորս
Տր. Հէրիս և իւր կինը անցեալ տարի Հա-
յաստան այցելութեան ատեն գրեր են ի-
րենց բարեկամաց որ յԱնգլիա: Այս ամո-
լից պաշտօնն էր նպաստել կոտորածի զո-
հերուն այն դրամով զոր Անգլիոյ «Բարե-
կամաց Ընկերութիւնը» հայթայթեց: Գիր-
քը Հայոց մասին շատ նպաստաւոր կեր-
պով կը խօսի և կ'արժէ կարդալ ու կար-
գալ տալ Ամերիկացոց: Գինն է \$1.25:
Հրատարակուած է Fleming H. Revell
Companyէն, 112 5th Ave. New York.

ԵԿՈՒՅՈՒ ՄԵՍԻՆ

SIEGEL & COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ Հասարա-
կութեան ծանուցանել թէ մենք վերոյի-
շեալ տիեզերահոգակ մեծ վաճառատան
առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ու-
նինք ուր արուեստական աղաներ կը չի-
նենք ու կ'ընծայենք մեր յաճախորդնե-
րուն, թէ՛ հասաով, թէ՛ վերի շարքը
ամբողջ, թէ՛ վերի ու վարի ծնօտներու
աղանները միասին: Մեր շինածը ամենա-
լաւ, ամենագիմացկուն տեսակէն է: Այն
Հայ Տիկիները ու Պարոնները որ անգլի-
երէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր
քով գիւրութիւն, վասն զի մեզի օգնա-
կան ունինք հայ ատամնաբոյժ մը: Վերի
ծնօտի ամբողջ շարքը ութ տողարով կը
չինենք, վարինն ալ ութ տողարով: Մեր
գները յոյժ հափաւոր են, ու գործը յոյժ
ընտիր:

E. P. HAYES, D. D. S.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77 Էվինիու Նիւ Լորք
264 և 274 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

«Հայքի» նախորդ տարիներն կը վա-
ճառուին հետեւեալ գներով:
Ա. տարի, 1 տողար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. " 2 " " կամ 10 ֆրանք:
Գ. " 2 " " " "
Դ. " 2 " " " "
Ե. " 2 " " " "
Զ. " 1 " " 5 "

ՀԱՅՔ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԵՄՍԵՅ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ
երկու տողար (տասն ֆրանք)
Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի Մ. Ս. Գ Ա Ք Ր Ի Է Լ Ե Ա Ն